

Թիւ 26285  
Փետրուար 6, 1979

Արժանաշնորհ  
Տ. Գառնիկ ԲԳՆԵՅ. Հալլաճեան  
Հովիւ Ս. Խաչ Եկեղեցւոյ  
Նախագահ ժխական Խորհուրդի  
Յունիքն Սիթի.

Սիրելի Տէր Գառնիկ,

Ստացած ենք Փետրուար 2, 1979 թուակիր ձեր տեղեկագիրը, որով կը հա-  
ղորդէք թէ ձեր նախագահութեամբ Յունուար 28ին գումարուած համայնքիդ ժխա-  
կան ժողովին մէջ կատարուած է ժխական Խորհուրդի վեց անդամոց ընտրութիւնը,  
եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը՝ կը խնդրէք ընտրուած անձերու  
վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ ձեր ժխական ժողովը տեղի ունեցած է Թեմական Կանո-  
նադրութեան տրամադրութեան համաձայն, այսու գիրով կը վաւերացնենք ժխական  
Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Հաճեցէք փութով Առաջնորդարան ղրկել ժխական Խորհուրդի նորընտիր Դիւա-  
նի անդամոց անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը; ինչպէս

Օրհնելով ժխական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք ձեզի եւ ձեր պաշտօ-  
նակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի պայծառութիւն  
Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուր-  
դին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ

Արմէն Քալպեան  
Ռիչըրտ Ասոյեան  
Ճան Յովսէփեան  
Չարլզ Աբգարեան  
Ճէք Սասունեան  
Գառնիկ Շէնլուկեան